# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | Անվտանգության տեսախցիկ: Տեսակը՝ Bullet: Պատկերի լուծաչափը՝ առնվազն 4 ՄՊ՝ 2560×1440, առնվազն 25 կադր/վրկ: Օպտիկան՝ ֆիքսված կամ վարիֆոկալ՝ առնվազն 2.8–4 մմ միջակայքում: Ֆիքսված կիզակետային հեռավորությունն ընտրվում է պատվիրատուի կողմից՝ տվյալ մոդելի գործարանային տարբերակներից: Մարդու և տրանսպորտային միջոցի հայտնաբերում և դասակարգում: Խելացի երկակի լուսավորում՝ ներկառուցված ինֆրակարմիր և սպիտակ լուսարձակներով, առնվազն երեք ռեժիմով՝ միայն IR, միայն սպիտակ լույս և հայտնաբերման դեպքում IR-ից սպիտակ լույսի ավտոմատ անցում: IR և սպիտակ լուսավորման հեռավորությունը՝ յուրաքանչյուրն առնվազն 30 մ: WDR՝ առնվազն 120 ԴԲ: Ներկառուցված միկրոֆոն: Smart H.265+ կամ համարժեք բարելավված H.265 կոդավորման աջակցություն: Սնուցում՝ PoE՝ IEEE 802.3af: Պաշտպանվածության աստիճանը՝ առնվազն IP67: • Մատակարարվող տեսախցիկները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական բնութագրի բոլոր պահանջներին և լիարժեք ինտեգրվեն ծառայությունում արդեն գործող Dahua DHI-NVR5432-EI2 և DHI-NVR5464-EI2 տեսագրող սարքերին՝ ապահովելով հիմնական և օժանդակ տեսահոսքերի դիտում , Smart H.265+ կոդավորմամբ տեսահոսքերի ընդունում և պահպանում, իրադարձությունների, ինչպես նաև մարդու և տրանսպորտային միջոցի դասակարգման տվյալների փոխանցում, ցուցադրում և որոնում, ժամի համաժամացում, տեսախցիկների հեռավար կարգաբերում, firmware-ի տարբերակի դիտում և թարմացում NVR-ի միջերեսից: • Յուրաքանչյուր տեսախցիկի միացման համար մատակարարը պետք է անվճար տրամադրի 60 մետր արտաքին տեղադրման համար նախատեսված FTP Cat5e մալուխ՝ ընդհանուր ֆոլգայապատ էկրանով, PE կամ HDPE արտաքին |

| | |
|---|---|
| | պատյանով, ուլտրամանուշակագույն ճառագայթների և խոնավության նկատմամբ դիմացկուն, ամբողջական պղնձե՝ առնվազն 24 AWG կամ ավելի հաստ հաղորդիչներով և PoE IEEE 802.3af/at ստանդարտներին համատեղելի: Քրեակատարողական հիմնարկներում առկա է գործող տեսահսկման համակարգ և համապատասխան ցանցային ենթակառուցվածք: Նոր տեսախցիկների տեղադրման աշխատանքները պետք է իրականացվեն գործող համակարգի համապատասխան PoE կոմուտատորից մինչև տեսախցիկի՝ պատվիրատուի կողմից նշված տեղադրման վայրը: Տեսախցիկների տեղափոխումը ՀՀ ԱՆ «Սևան», «Նուբարաշեն», «Աբովյան», «Արթիկ», «Վանաձոր», «Գորիս» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ, ինչպես նաև ստորև նշված բոլոր աշխատանքների կատարումը, անհրաժեշտ նյութերի և պարագաների տրամադրումը պետք է իրականացվեն մատակարարի կողմից՝ անվճար : 1. Մատակարարը պետք է իրականացնի տեսախցիկների տեղադրումը, համապատասխան PoE կոմուտատորից մինչև պատվիրատուի կողմից նշված տեսախցիկի տեղադրման վայր մալուխի անցկացումը, մալուխի պատշաճ ամրացումը, տեսախցիկի մոնտաժումը, միացումը և տեսադաշտի կարգաբերումը : 2. Տեղադրման համար անհրաժեշտ բոլոր միակցիչները, ամրակները, կցորդիչները, մոնտաժային տուփերը և այլ օժանդակ ու ծախսվող նյութերը պետք է տրամադրվեն մատակարարի կողմից: 3. Յուրաքանչյուր տեսախցիկի մոտ պետք է տեղադրվի պտուտակներով փակվող՝ առնվազն IP65 պաշտպանվածության աստիճան ունեցող հերմետիկ մոնտաժային տուփ: Մալուխների փաստացի երկարությունը կարող է անհավասարաչափ բաշխվել տեսախցիկների միջև՝ ելնելով տեղադրման վայրերի պայմաններից, սակայն տրամադրվող մալուխի ընդհանուր երկարությունը պետք է հավասար լինի մատակարարվող տեսախցիկների քանակի և 60 մետրի արտադրյալին, իսկ տեղադրման աշխատանքներից հետո չօգտագործված մալուխի մնացորդը պետք է հանձնվի պատվիրատուին: Տեսախցիկների, մատակարարված նյութերի և մատակարարի կողմից կատարված տեղադրման աշխատանքների երաշխիքային ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս՝ ընդունման-հանձնման օրվանից: Երաշխիքային դեպքի մասին ծանուցումն ստանալուց հետո մատակարարը պարտավոր է առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում արձագանքել, իսկ հայտնաբերված անսարքությունը վերացնել կամ սարքավորումը համարժեք նոր սարքավորմամբ փոխարինել առավելագույնը 7 աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքային սպասարկումը, իրականացվում է մատակարարի կողմից ամբողջությամբ անվճար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/58 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |